

սկզբունքին մասին մասնաւորաբար, որեւէ փաստարկում կատարելը անի-մաստ պիտի ըլլայ: Հակառակ պարագային, եթէ այս անհատը առաջին քայլը առնէ դէպի բարոյական հասարակութիւն, կարելի է անոր լաւ շարժառիթներ ներկայացնել ու մղել զինք դէպի *լաւն ու բարիի* սկզբունքը:

Բարոյական հասարակութեան մաս կազմելու եւ *լաւն ու բարին* որպէս սկզբունք ընդունելու իմ գլխաւոր շարժառիթը այն կրնայ ըլլալ, որ ես չեմ ուզեր ծայրայեղ *եսասիրութեան*⁽⁵⁶⁾ (Egoism) ուղիին հետեւիլ, այլեւ կ'ընտրեմ *այլասիրութեան* (Altruism) ուղին, որ զիս կ'առաջնորդէ դէպի Կանտի բարոյագիտութիւնը, դէպի *լաւն ու բարին*:

Այստեղ պէտք է զանազանել ծայրայեղ եսասերը՝ պարզ եսասերէն: Ծայրայեղ եսասերը այն անհատն է, որու մօտ կը շեշտուի բարոյական գիտակցութեան պակասը (ինչպէս՝ վերոյիշեալ օրինակը). իսկ պարզ եսասերը, եթէ անբարոյական վարմունք մը կատարէ, իր մօտ կը յառաջանան, ինչպէս Նշեցինք՝ յանցագործութեան, ամօթխածութեան ու խղճահարութեան զգացումները:

Անհատական ինքնավարութեան ոլորտէն ներս բարոյական վարմունքի այլ շարժառիթ մը կը մշակէ սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայ **Ա. Սմիթ** (Adam Smith, 1723 – 1790 թ.) իր «*Բարոյական զգացումներու տեսութիւնը*» (1759, անգլ. բնագիր՝ „The Theory of Moral Sentiments“) երկին մէջ:

Սմիթ, բարոյական վարմունքի շարժառիթ կը նկատէ ուրիշներու իրաւացի հաւանութիւնը: Սմիթի համաձայն, բնականօրէն, մարդ ոչ միայն կը ցանկայ սիրուած ըլլալ, այլեւ՝ սիրուելու արժանի: Գաղափարի մշակման ընթացքին, *սիրուած / սիրուելու արժանի* համեմատութիւնը կը փոխարինէ՝ *գնահատուած / գնահատուելու արժանի* եւ *հաւանուած / հաւանուելու արժանի* բառակապակցութիւններով, մասնաւոր կարեւորութիւն տալով այս վերջին համեմատութեան: Իսկ հաւանութեան (դրական գնահատման) գերագոյն աստիճանը հիացումն է. եւ երբեք զարմանալի չէ, որ մենք ցանկանք ըլլալ անոնց պէս, որոնք մեր հիացումը կը վայելեն:

Հաւանուած կամ գնահատուած ըլլալը եւ հաւանութեան կամ գնահատանքի արժանի ըլլալը բոլորովին կը տարբերին իրարմէ: Մեր գիտակցութեան մէջ, այս տարբերութիւնը տեղի կ'ունենայ՝ *խղճին* միջոցով: Օրինակ, երբեմն կը զարմանանք, որ անարժաններն ալ կը հաւանուին կամ կը գնահատուին, ինչ որ արհամարհելի ու անարդար կեղծում է: Այլ խօսքով, մեր խիղճը հանգիստ է, երբ միայն գնահատանքի արժանիին կու տանք մեր գնահատանքն ու հաւանութիւնը:

Սմիթ, *անկողմնակալ դիտորդ* (Impartial Spectator) կը կոչէ այն շինծու կերպարը, որ մեր գիտակցութեան մէջ կը գտնուի եւ իր առողջ իմացականութեամբ, պատասխանատու է՝ հաւանութեան ու գնահատանքի գործընթա-

(56) **Եսասիրութիւն** (Egoism) եւ **այլասիրութիւն** (Altruism) հասկացութիւններուն մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 443: